

ԲԱԺԱՆՈՐ՝ ԱԳՐՈՒԹԻՒՆ  
 Աղիարիոյ համար  
 Տարեկան 12 մր.  
 Վեցամսեայ 6 »  
 Արասահմանի հա-  
 մար Տարեկան 15 »  
 Վեցամսեայ 8 »  
 Ամերիկայի համար  
 Տարեկան 3 ռ.  
 Վեցամսեայ 1.50 »  
 ԿԱՆԻՒԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ  
 Ծրանոցման տարիս  
 երեսին համար 40 սանթիմ  
 է. իսկ վերջին երեսի հա-  
 մար 20 սանթիմ է. երկին  
 սանթիմ անգամներու համար  
 20 Օ՛ղ զեղը կըլլայ:

# ՇԱՐՋՈՒՄ

Նամակ եւ գրամ դրկեյ  
 Խոնարարութեան հասցեիկ  
 —  
 Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна.  
 Redaction du journal  
 «Charjoum»  
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ  
 ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Վրասահմանի համար ձեռքի  
 ( 20 ՍԱՆԹԻՄ )

## ԵՂԲԱՅՐԱՆԱՆՔ (՝)

Տիեզերական համեմատումները մարդկային առաջընթացի մասին սահմանակէտն է:

Ընկերական մտատկար է այն որուն կը դիմէ ներկայ սերունդը, եղբայրութեան երազը՝ որ բոլոր քեցցուց ժողովուրդին ցաւերը, եւ պայագայ ընկերութիւնը, ուր շխարհային ներգաշնակութիւնը պիտի մարեցնէ եղբայրասպան ատելութիւնները եւ ճնշուած ամբողջի սպառնալից բարկութիւնները:

Ի այս աշխարհում յոյսը որ կը սարսալայ բոլոր ազատ հոգիներուն մէջ՝ կարծուածին չափ շուտ չպիտի իրականանայ: Ընդհակառակը կարծես վայրենի բարքերու, բարոյական անկումի եւ վնասութեան վերագարձով մարդկութիւնը կը զօրացնէ իր դէպի բարեշրջումը բաժնուած հասանքը անձնատուր ըլլալով բոլոր աշխարհի ցնորքներուն սրտը անցեալին ամօթալից արատը կազմեցին:

Արիւնառու շտապանականութիւն, սխրբիմ եւ կոպիտ ազգամոլութիւն, պատերազմ եւ իրերապայանութիւն, ահա ստոնք են խռովիչ նշանները այն վրդովեալ հոգիի վիճակին որուն մէջ կը սնանին հակայեղափոխական բազմազան զօրութիւնները: Այս մոլորումը որքան որ բարոյացուցիչ ըլլայ, այսու հանդերձ կարելի է բացատրել այն յուսախաբութիւններով եւ պատրանքներով զորս կառավարութիւններուն կեանքը ներկայացուց տափակ մտքերու՝ որոնք անկարող եղան գիտակից մեկնութիւն մը տալու ընկերական վէրքերուն: Սակայն կան ժողովուրդներ որոնց վրայ ի գործ գրուած հարստահարութիւնը այնքան խիտ եւ թանձր հանգամանք մը կառնէ:

(՝) Այս յօդուածը թարգմանած ենք ժընէլի մէջ ֆրանսերէն լեզուով հրատարակող Մակեդոնական Էֆֆօրթիթէն. որ գրուած է Դոշուկի խմբագրութեան ստացած «Եղբայրանանք» գեղեցիկ յօդուածին առթիւ:

որ անկարելի է չը տեսնել շարիքին անմիջական պատճառները:

Արեւելքի ժողովուրդները այս պարագային մէջն են որոնց վրայ բազմազարեան եւ միշտ անողորմ բռնակալութիւն մը անպատիժ կերպով կը ծանրանայ շնորհիւ հարստահարուած ժողովուրդներուն անհամաձայնութիւններուն եւ տնտեսական անարդարութեան: Անոնք որ ճակատագրային ձախողութիւններու կը հաւատան, չպիտի կրնան այդ բռնակալութեան ծանրութիւնը զգալ իրենց յամառ կացութեան մէջ որ վերջի վերջոյ ի կորուստ պիտի մատնէ թուրքիոյ գեղի ժողովուրդները:

Թուրք բռնակալութեան պատճառները ամէնուն աչքին կը զարնեն իրեն տրամաբանական եւ շարունակական շարքերով: Յուսախաբութեան տեղի չկայ ե ոչ ալ նրբին ու արհեստական մեկնութիւններու:

Թուրքերը կրնան ամէն օր զմեզ անպատիժ կերպով ի ողիտընել, շարքել անոր համար որ մենք՝ արեւելքի գերիներս, չենք կրնար միահապտել եւ կու գիտագործել մը ընել այդ կամակատար իշխանութեան. ասի յստակ, ինքնարուղիս եւ տարրական տրամաբանութիւնն է:

Սակայն հակառակ ստոր վարձնումը դեռ չը կատարուի: Ամէն ժամանակէ աւելի անհամաձայնութիւնները միշտ կը կենան ջլատելով համայնքի հաւաքական կորովը: Սակայն վեհ հակազդեցութիւն մը՝ ճշմարիտ յեղափոխականներէ բղխած, սկստարեւելքի ազգայնականներուն մոլի անջատումին դէմ պայքար մղել:

Մակեդոնացուց եւ հայերուն կը պատկանի այդ սկզբնաւորութեան պատիւը:

Պիտի յիշուի անշուշտ որ Լահէյի վեհաժողովին երբ տրդարութեան եւ մարդկութեան բարձր սկզբունքները պետութիւններուն կողմանէ հանդիսաւ որ կերպով հաշակուեցան, մակեդոնացիք եւ հայերը իրենց ձայնը միացուցին միեւնոյն յայտարարութեամբ որ զոքելու համար այն «արդարու-

թեան» դէմ որ անհղձ կը ձգէր եւ գրեթէ կը նուիրագործէր այն մեծ անարդարութիւնը որ ստրկացուց արեւելքի բրիտանները:

«Էֆֆօրթ» որ հիմնուած է արեւելքի հարստահարներուն դատին շուրջը հաւաքել վեհ հանքերը եւ մարառող կամքերը, սկսած է արդէն ե պիտի շարունակէ իր պայքարը ի մի համախմբելու համար ճշմարիտ յեղափոխականները: Հայ յեղափոխական Դաշնակցութեան պաշտօնաթերթը եզոզ «Դոշուկ» իր մարգարութիւնը այս առթիւ մեղ զրկած է իր ջերմ շնորհաւորութիւններուն հետ, նշանաւոր յօդուած մը որուն թարգմանութիւնը կը գնենք մեր Դիւրիմ առաջին երեսին մէջ: Ըօղուածը հայերէն լեզուա գրուած էր եւ անկեղծ ներշնչումով մը, այնպէս որ անոր թարգմանութիւնը սրբան որ չէ կրցած իրեն յատուկ անուշութիւնը տալ, այսուհանգերձ պիտի գնահատուի մեր ընթերցողներէն որոնք ազնիւ գաղափարներով ողբերուած են:

Եւ մենք, կը զրկենք մեր եղբայրական ողջոյնները Դոշուկի այդ անվեհեր խումբին յուսազրելով զիրենք՝ որ հաւասարապէս մղուած պայքարը պիտի պսակուի կատարեալ եւ դարձեալ հաւասարապէս յաղթութեամբ:

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ, 12 Մայիս  
 Հրատարական 2րդ եւ կատակերգութիւն 2րդ նոյնպէս լմընցաւ, միմտական գովեստին վերջին վարագոյրը իշաւ երէկ եւ այսօր, նոյն աղտոտ գերակատարները կուգան իրենց ուղորական տեղերը բռնելու:

Իստակը լեցուեցաւ. Օրմանեան այլեւ չը դիմացու «հրատարակալ» վիճակին եւ այսօր իր «հայաց պատրիարք» (ոչ հրատարակալ) պաշտօնատեղի պիտի իջնայ, ժողով պիտի գումարէ եւ Արթին ալ պիտի նախագահէ քաղաքական ժողովը: Նաբուզո-

թոնտոր արքային հրամանն է, եւ ասոր հնազանդեցան երէկ թէ Օրմանդատէ Ալի եւ թէ Արթին Մուսաֆա փաշաները...:

«Տարօրինակ հանդիպումը» երէկ Մայիս 11ին, հինգշաբթի օրը, թէ Օրմանդատէ եւ թէ Արթին Մուսաֆա ելլալը կը կանչուին փութով: Արթին կերթայ եւ Օրմանեան արդէն հոն կը գըտնայ Թահսիմ պէյի հետ:

Արթին ու Օրմանեան տս վերջին երեք ամիսները շունու կատուի պէս էին իրարու հետ, զիրար հրէք տեսած չէին: Թահսիմ կը տեսնայ որ փաշային վիճակը քիչ մը «քնքուշ» է, կը խնդրէ որ փաթիւք էֆէնտին քիչ մը միւտ սեփեակը քաշուի: Օրման կերթայ: Թահսիմ կը բացատրէ որ Համիտ հրամայած է երկուքը միատեղ կանչել, որ Արթին զայն համոզէ իսկոյն պաշտօնին վերադառնայ:

Արթին աղուէսի պէս երկու օտքով թակարդը կիչնայ եւ պոչը խաղցնել կսկսի ատանհաճոյ վիճակէն ելլալու հնար խորհելով: Աս պահուն Թահսիմ ներս կը հրաւրէ Օրմանեանը եւ երկուքին ալ կըսէ՝ «Վեհապետիս հրամանն է որ դուք երկուքնից ալ այսօրու ընէ գառնաք ձեր պաշտօններուն»:

Ու խօսամա՞ն Օրմանեան, իր դոմէշի մարմինովը կը շփթի, խօսելու ընդունակութիւնը կը կորսնցունէ եւ կսկսի լալ... «էհ, Սրբազան, կըսէ Արթին, հայտէ պատասխանէ նայիմ», Իստակալով Թահսիմի կաւելցնէ «էֆէնտիմ» չօճու իս պէս կուլայ: Արթինի դիրքը աւելի կայլայլեցնէ Օրմանի բիթացած ուղեղը եւ Օրման վերջնականապէս «էչը կը կորսնցունէ»:

«Ի՞նչ ընեմ, փաշաս, խորհուրդ մը տուր» կըսէ Արթինի փշրուած սիրտով: «Հրատարած պատերը ինձմէ խորհուրդ հարցուցի՞ր... գնա, ինչ կուզես ըրէ»:

Կը յարի Արթին:

Աս չափը միայն իրարու հետ հայերէն կը խօսին, խոյ անկէ Թահսիմ պէյ կը միջամտէ ընելով, «փաշա, վեհապետը կը

հրամայէ որ դուք համոզէք փաթ-  
րիք էֆէնտին» . Արթին տիպո-  
մաթի մը լեզուով կէս բերան  
կառաջարկէ Օրմանեանի . «Սըր-  
բազան , Վեհափառի հրամանն է ,  
պիտի հնազանդիք , ոչ թէ պայ-  
մաններ առաջարկելով , այլ  
«չնորհներ խնդրելով» անկէ ձեր  
ժողովրդին համար» :

Առ դառնալով Թահսիմի կըսէ .  
«պէյ մատուցէք տիրոջս ոտքը  
իր հաւատարիմ «զուլ» ստրուկ  
Արթինի կողմէն , որ յանուն իմ  
նախնեացս իր գահուն մատուցած  
հաւատարիմ ծառայութեան . . .  
և այլն . . . Օրմանեան կը վերա-  
դառնայ , միայն երեք շնորհ-  
ներ , երեք ողորմութիւններ կը  
խնդրէ իր հօտին համար» . Աս  
թուղթը Արթին իր անունովը կը  
ստորագրէ :

Թահսիմ կը մտնայ Համիտի  
որջը և իսկոյն կը վերադառնայ ,  
բերելով հրաման հոն և եթ գրեն  
թէ առ ի՞նչ երեք շնորհներ է  
ուզածնին . կարծես «պատճառա-  
բանեալ հրաժարական» երբէք  
գոյութիւն չունի կամ առ երեք  
«պահանջները» երբէք լսած չէ :

Արթին կառնէ թուղթ մը , իս-  
կոյն կը գրէ Օրմանի հրաժարա-  
կանին երեք առաջարկները . Ա.  
Կիլիկիոյ ընտրութիւնը ըստ ա-  
ռաջնոյն . Բ. չորս տարուան զի-  
նուորական տուրքի պարտքին  
նուիրումը հայ ժողովուրդին և  
Գ. երթեւեկի ազատութիւն : Թահ-  
սիմ ներս կը «անի և կը բերէ  
պատասխանը . «լու Վեհափառը  
կը հլամայէ , որ շարժի , ամսոյս  
13ին , նախարարական ժողով ըլ-  
լայ , ուր առաջարկները մազպա-  
թայ ըլլան և իրեն ներկայաց-  
ուին ու ինքն ալ իբր շնորհ հրա-  
ման ընէ գործադրելու , իսկ դուք  
այսօրու ընէ գացէք ձեր պաշտօն-  
ներուն» . . .

Ասոր վրայ Օրմանեան քիչ մը  
սիրտ կառնէ , օրհնէնք ու փա-  
ռաբանութիւն կընէ և իսկոյն կը

պնդէ պէյին , որ փաշան ալ պի-  
տի գայ ժողովի և իր խորհուրդ-  
ներով օրհնէ ու առաջնորդէ ի-  
րեն : Արթին կը համաձայնի քիչ  
մը «չեմ ու չում» ընելէ ետքը :

Առ Օրման կը մեկնի ազտա  
սիրտին վրայէն խոշոր քար մը  
վար նետածի պէս , թեթեւ ինչ-  
պէս Ադամ սկզբնական մեղքէն  
առաջ . . . ու իսկուս ուրախ որ  
նորէն պատրիարք մնաց , իր գահը  
չը կորսնցուց :

Արթին ալ ուրախ է որ նորէն  
հայոց ազգին թեւին մէկ ծայրը  
իրեն ձեռքը մնաց . գէթ առ  
թեւը շարժելով Սուլթանին քով  
իր խախտած գիրքը պահելու  
համար . . .

Մոռցայ ըսել , որ երբ Թահսիմ  
կը խնդրէ Օրմանեանէ միւս սեռ-  
եակն անցնիլ , Արթին կը պարզէ  
որ առ մարդը սիրտած չէ Հա-  
միտէ , արդարութեան ու կրօնից  
նախարարէ , ներքին զործոց  
նախարարէ և ուտիկանութեան  
պետէն . և ոչ մէկ պաշտօնական  
վայրէ կը սիրուի , ուրեմն այլեւս  
ի՞նչու Վեհափառը կուզէ վայն  
նորէն նստեցնել . իսկ ժողո-  
վուրդը երբէք չուզի զայն :  
Թահսիմ կը բացատրէ որ Սուլ-  
թան չը սիրեր և գիտէ անոր գէշ  
մարդ ըլլալը , բայց չուզի որ  
պատճառաբանեալ հրաժարական  
տայ . զՍուլթան տեսակ մը առ-  
պարէզ հրաւիրէ , հպատակ ըլ-  
լալով՝ իր տիրոջ պայմաններ  
գնէ , իբր հաւատարի ու ստոր  
վրայ հրաժարի . կուզէ վայն  
կոտրել , բայց ետքէն յարմար  
առթի մը բերել ու վաճառել և ոչ  
հրաժարիցնել . . .

«Ասորուան ժողովը» : Ասոր ,  
մայիս 12ին երկկոյնեան Պատրի-  
արքարանի մէջ ժողով պիտի ըլ-  
լայ և Արթին ալ պիտի երթայ :  
Օրմանեան պիտի յայտնէ ժողո-  
վին կայսեր խոստումը և իր վե-  
րագարձը . պիտի գովարանէ ,  
խնկարկէ Սուլթանի անձը : Ժո-

ղովականներէ շատերը պիտի ու-  
րախանան , փառաբարութիւն որ  
Օրմանեանէ եկաւ , և իրենց գըր-  
պանի դուռները բացուեցան . . .  
զողովուրդ , կաշառք ուտելու . . .  
ժողովականներու խոշոր մեծա-  
մասնութիւնը անտարբեր անա-  
սունի մը պէս պիտի նստի լսէ ու  
վերջը ականջները երկա՛ր- եր-  
կա՛ր կախ ըրած ելլայ երթայ :  
Առ հոն փոքրիկ թիւ մը , քանի  
մը անձեր պիտի մղկտան սիր-  
տեքնուն մէջ , պիտի այրուին որ  
առ անգամ ալ Օրման և Արթին  
խաղ մը խաղացին , բայց ձեռ-  
քերնուն բան մը չի գար . . .

Բ Ժ  
(Մնացեալը յաջորդով)

### ԲԱՑ ՆԱՍԱԿ «Հնգուկի»

Խորին ցաւ և մեծ զարմանք գգա-  
ցինք Հնգուկի Նո 2ի (10 Ապրիլ 1900)  
մէջ Թաւրիզէն Մլան ստորագրու-  
թեամբ գրուած յօդուածը կարդալով .  
Այդ յօդուածին շարժամուրթեամբ  
խեղաթիւրուած սուտերուն պատաս-  
խանելէ առաջ , երկու խօսքով բա-  
րացատրենք մեր գգացած ցախն և  
զարմանքին պատճառը . նկատի ու-  
նենալով յեղափոխական կուսակցու-  
թեան պատիւը և գործին ապա-  
գայ յաջողութիւնը :

Խորին ցաւ կը գտնուի անոր համար ,  
որ Հնգուկեան կուսակցութիւնը անց-  
եալ զԿարգիւն չը իրատուելով սա-  
կախ կրփորձուի իր զոյութիւնը  
վաճաղի ենթարկելու . Մլանի նման  
անցեալին արտաւարտ մարդիկ կու-  
սակցութեան մէջ ընդունելով . կու-  
րբեւոր կամակերպու անդամ ընարե-  
լով և անոնց յօդուածները Հնգուկի  
մէջ հիւրընկալելով :

Մլան իր փորձուած անցեալով Հըն-  
ցակեան կուսակցութեան արդէն ծա-  
նօթ լինելու էր . Հնգուկեան կուսակ-  
ցութեան նորակազմ վարչութիւնը  
կընդունի իր կազմակերպութեան մէջ  
այդպիսիները , զա կը նշանակէ թէ  
չէ իրատուած տակաւին Ա. Արփիար-  
եանի փորձութիւններէն :  
Երբ այս կարգի դիտողութիւններ

կուղղուէին Հնգակեան կուսակցու-  
թեան նախորդ վարչութեան , մաս-  
նաւիչ ընելով Ա. Արփիարեանի կեղ-  
տառ անցեալը և կասկածելի ներկան  
ու պահանջելով որ այդ կասկածելի  
արարածը կուսակցութեան նկատուի,  
վարչութիւնը բնաւ ուշադրութիւն  
չը դարձնելով այս իրաւացի նկատու-  
ութիւններուն Ա. Արփիարը բն-  
յունեց Պոստոյ կամօրէն անգամ , եւ  
այդ սխալ և վնասակար ընկալքին  
տիրուր հետեւանքները քիչ յետոյ  
վայելից , որ ամէնուն ծանօթ է ար-  
դէն :

Ահա նոյն բանն է , որ այսօր սե-  
ղի կուսակցայ յանձին Ալանի , Ինչպէս  
ը ինք . Մլան իր արատաւոր անցեա-  
լով կուսակցութեան ծանօթ մէկը  
ըլլալով , այսօր Հնգակեան կուսակ-  
ցութեան Թաւրիզի կամօրէն ան-  
գամ ընտրուած է և անոր գրածը  
Հնգակի էջերուն մէջ :

Հնգակեան կուսակցութեան կեղ-  
րոնք պէտք է ուշադրութիւն դառ-  
ցունէ արատաւոր անցեալ ունեցող  
ներուն վրայ և և ինչ չի տայ . որ  
անոնք սպրդին կուսակցութեան մէջ  
եթէ Մլանի նման կասկածաւոր անց-  
եալ ունեցողները կուսակցութեան  
մէջ մնան , կուսակցութիւնը բնաւ  
երբէք յոյս չի կրնար ունենալ իր  
որչ գոյութիւնը ապահովելու . եթէ  
երբէք վերակենդանութեան փոքը  
նշույլ մըն ալ ունենար օրկանիք մը ,  
և կը լինի այն , ինչ որ եղած է Ա.  
Արփիարեանի օրով :

Եւ արդէն Մլան բնաւ երբէք ճըլ-  
մարիա և անկեղծ յեղափոխական մը  
չէ կարող լինիլ , քանի որ անոր շա-  
հախոյրութիւնը այստեղ ակնյայտի  
եղած է , իր անձնական շահին համար  
դատաճանաճ է իր սկզբունքներուն  
և լղած է իր թքածը . այո՛ , յեղա-  
փոխական չէ կարող դառնալ , քանի  
որ իր 5-6 հոգիէ բաղկացած ընտա-  
նիքը ապրիցնելու համար կատարեա-  
նայ մինչեւ անգամ զոհել իր համո-  
զումի երը :

Փաստեր և ապացոյցներ մէջ չենք  
բերեր , որպէս զի անուղղակի մատ-  
նութեան պատճառ չը դատանք .  
եթէ Հնգակի խմբագրութիւնը ցան-  
կութիւն յայտնէ , կարող ենք մաս-  
նաւոր նամակով յայտնել մեր փաս-  
տերն ու ապացոյցները :

Մենք իբր յեղափոխական—սա-  
կայն ոչ կուսակցամուլ—եւ իբր Գա-  
նակեան , ի սրտէ կը ցանկանք

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՇՈՅ ԱՆԻՍՏՐՅԻ ԱՆՑԲԵՐ ,  
ՊԱՏԵՐԱՅԻՆ ՅԵՏՈՅ , ՈՒ  
ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆ ԵՄԵՆՈՒՄ



ԺՁ .

Դատանք Միացեալ Ընկերութեան  
վերոյիշեալ ուսուցչաց , որոնք յեղա-  
փոխական գործին ինչպէս ըսինք  
ուղղութիւն մը տալ կուզէին , բայց  
ինչ օգուտ որ՝ ատոնք ևս պահանջ-  
մանց ոգով չը կրցան այն ուղղու-  
թիւնը տալ , ինչ որ արդի յեղափո-  
խութիւնը կը պահանջէր . հետեւա-  
բար թեր ու գէ՛մ սխալներն փոխա-  
նակ ջնջուելու կը շարունակուէին ,  
երբեմն այդ սխալներէն արդիւնաւոր  
հետեւանքներ ծնունդ առնելով գուրս  
կուգային , երբեմն ալ արեւտալի հե-  
տեւանքներու կը բաղխէին : Այդ

սխալներու առաջին ասինք շաս-  
իժուար կըլլար , անոր համար որ  
չկար նախամտածուած պատրաստեալ  
ճրագիր մը , որ ամէնքն ալ ստոր իւ-  
րաքանչիւր մէկ յօդուածին գլուխ  
կայիւնով հնազանդէին , և ըստ այնմ  
իրենց քայլեր առնելով առաջ եր-  
թային . այդ անհրաժեշտ և միակ  
միջոցի մասին կը սպասուէր աւելի  
բարձր և զարգացած դասէն գուրս  
գալուն :

Միացեալ Ընկերութեան այդ դա-  
սատուներն , որոնք յանձն առած  
էին յեղափոխութեան ծառայելու ,  
և միանգամայն թեր ու գէ՛մ պորձո-  
ղութեանց ալ ուղղութիւն մը տա-  
լու , և պահանջմանց ոգով առաջ  
ընթանալու , այդ միջոցին կը որ ի-  
րենց ձեռամբ գէպք մը տեղի ունե-  
ցար . Մշոյ քաղաքին մէջ , իբրեւ նմոյշ  
հարկ կը համարեմք յատաջ բերել և  
չոյց տալ թէ այդ գէպքէն ինչ տե-  
սակ հետեւանքներ ծագում առնելով  
գուրս եկան , և ուր յանդեցան :

1886 թուականին կաթողիկոսայոց  
առաջնորդն , հայոց թշնամի , իսկ

առձկաց բարեկամ Յովհաննէս եպիս-  
կոպոս , լսելով որ հայերն մէկգմէկու  
կը կատուէին , կազմակերպութիւն-  
ներ կընեն , հայ ժողովուրդը փութ-  
կոտութեամբ մը կառավարութեան  
դէմ լարելու , իր ցածութեամբ ար-  
գելք հանդիսանալու համար դաւա-  
դրութեան միջոցներու մասին սկսաւ  
խորհիլ , և իր ստոր միտումները լա-  
րել գէպի հայերն . և ըստ այնմ  
սկսաւ հետեւել , տեղեկանալու թէ  
որո՞նք են այդ տեսակ խնդրոց մաս-  
նակցողները , որպէս զի կառավարու-  
թեան միջոցաւ խոչնդոտ դառնար ,  
ամէն տեսակ արգելքներ յարուցանե-  
լով :

Մտալին անգամ ըլլալով Մշոյ մէջ  
կազմակերպեալ գօմթէն այդ ամե-  
նագարելի կաթողիկ վարդապետի  
գուստան զիտումներն ի նկատի առ-  
նելով , որոնց շուտ մը այդ ցած ա-  
բարած մէջտեղէն վերջունել , և  
միանգամայն իր քով գտնուած պատ-  
րաստի 800 ոսկւոյ չափ գումարն ալ  
իւրացնել . այդ գրամով երկու երեք  
հրոսակայն խումբեր կազմակերպե-

լու , որով քանի մը օր անցնելէ յե-  
տոյ Գէորդ վարժապետ և Աղա Պէկ ,  
քանի մը տղաներ իրենց հետ առած՝  
գրչեղով առաջնորդարան կը մտնեն ,  
գօմթթէի առած որոշումն գործադրե-  
լու համար . բայց այդ գարչելին շուտ  
մը կիմանայ , կոկսի պոռոտ և  
միանգամայն կուտիլ , և երբ դուր-  
սէն երթալով ձայները կը շատանն :  
այդ միջոցին՝ Գէորդ վարժապետի  
ձախ բազուկը ինչպէս կըլլայ կը վի-  
րաւորուի . հարկագրուած այդ գար-  
չելին վերաւոր վիճակի մէջ ձգելով  
կը հեռանան , և այդ ժամանակ ու-  
սակիւնութիւնը վրայ կը հասնի . բայց  
ի դուր , ամէն բան եղած վերջացած  
կը գտնէ . շուտաւ ինչ ընելիքնին  
չեն գիտեր , և այսպիսի անխելա-  
կայելի գէպք մը որու ձեռամբ գուրս  
գայն չի գիտցուի :

Իսկ առաւօտուն ոստիկանութիւնը  
Գլորդ վարժապետի վիրաւոր բա-  
ղուէն հոսած արեան հետքերն առ-  
նելով , մինչեւ Մղա Պէկի դուր կը  
ստանին . և Աղա Պէկին այդպէս կը  
բանտարկեն , իբրեւ սպարազալ , ինչ-

ԿԱՍԿԱԾ ՄԸ

Օրմանեան և Արթին հաշուած են իրարու հետ, Սուլթանի հրամանով :

Օրմանեան կրկին պատշիարք է ոչ թէ իր պատճառաբանեալ հրաժարականին գոհացումը ստանալուն պատճառաւ, այլ իր պատճառաբանութիւնն ըրազրոյսի փոխելուն համար Ազգային պաշտօնի գլուխին անցած է նոյնպէս և Արթին փաշա, Սուլթանին հայ խոշորկեկ սարուկը : Այլ կըրկին տաճկահայ ժողովրդին բազմաթիւ արեւել խոշոր ցած արարածներու ճեղքը կը գտնուի, չը նայելով որ Արթիարեան լեռակազմեալները, սպառնազրբը զրկած էին այդ երկուսին, չը գիտենք թէ ինչու Հնչակեան կնիքը գործմելով այն թղթին վրայ, որու մէջ գտնուած սպառնալիքները յաւիտեանս յաւիտեանից սպառնալիքներ ալ պիտի մնան :

Ես շատ թերահաւատ եմ գէպի այն վերակազմեալ սղգային Արթիարականները, ոչ անոր համար որ անոնց մէջ ազնիւ հայեր չըկան, այլ անոր համար որ ատոնց զեկավարներու մեծ մասը այնքան յեղափոխական կրնան ըլլալ, որ շատ սովորական «երիտասարդ» թուրք մը, իսկ յայտնի է որ «երիտասարդ» թուրքերէն շատերը, նեղին ինկած միջոցներէն ամեն ստորնութեան պատրաստ են, մանաւանդ եթէ այդ ստորնութեան ծայրը գրամ կայ : Այս պատճառաւ ալ մըրտքէս գէշ կատակած մը անցաւ, երբ լսեցի թէ Արթիարականները սպառնագիր զրկած են Օրմանեանի և Արթինի : Այդ կատակածը աս է : Արթիարականները սեփականութիւնը որ իրենց յեղափոխական

գոյտ թիւնը վերջանալու վրայ է, Դաշնակցութիւնը կը գործէ անընդհատ կերպով և գոյցէ հետզհետէ Պոլսին ալ ամբողջովին իր ձեռքը առնու մտածան են բան մը ընել, լու համոզուած ըլլալով որ սպառնազրբին պատճառով կրնան կրկին խիստ խուզարկութիւններ տեղի ունենալ, մարդիկ ձերբակալուին որոնց մէջ կըլլան և Կաշնակցականներ, ու այսպէսով Կաշնակցականներու ուժերը կը ջլատուին, Չէ որ Արթիարականներու էն խոշոր ու տուալին նպատակը այդ է և ատոր հասնելու համար, անոնք ամէն միջոցի գիտած են և պիտի գիտեն, ըստ իրենց յայտարարութիւններու :

Հիւիէ

ՄԱՐԴԱՄԱՊԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Շարժումի ընթացողաց վարմանը թող չը պատճառ խորագրիս մարդասպան բառը, մարդասպանութիւն ըսելով սենք պէտք չէ որ անպատճառ հասկնանք հրացանով և կամ թէ սրով անձ մը սպանել :

Թուէս երեք շարթ ստալ, Փաթըրընի հայ գաղթականական միութեան ժողովարարին մէջ զազրելի ոճիւրի մը համար ձերբակալուեցան նոյն միութեան մարդակալը (ձորճ Զանքալեան) : Զանքալեան օրեր առաջ, 13 տարեկան հայ օրիորդ մը լսարեայութեամբ կը տանի գարեջրատուն մը . . . . . հոն՝ բռնաբարելով կը լլկէ, երբ տմեն բան ի գործ գնելէն վերջ խոժոռ նալուածքով մը յոխորտալով օրիորդի վրան կը պոռայ բսկով, սեթէ եղբորը և կամ թէ՛ ո՛ր և է ազգականներուդ պատմես զլուխը եկածը, գիտցած եղի որ կեանքը պիտի վերջացնեմ : Անոր օրիորդը ան ու ստրսափէն լուս ու մուշ սունը կը գտնայ և ատանց ձայնը հանելու իսկ, բայց ահա՛նաստեանը շատ չուտով երևան հանեցին, ու պարոն Արատարբը ձորճ Զանքալեանը էշու գրախառ նետել տուին (բանար) թող որ պապի իր խիղճը գինքը սանջելու չափ :

Լու համար, ինչպէս որ շատ անգամներ պատահած էր, և և առաջին անունում :

Որքան որ կառավարութեան հայաջինը ճնշումները երթալով կը սաստկանային, այնչափ ալ հայ ժողովուրդը տեղի յեղաշրջուելու պէտքը զգալով փութկոտութեամբ պատրաստուի կը ջնարար ջնարմ ետանդամբ, և ըստ այնմ կը շարժէր և Ժամ տուալ կը պատրաստուէր : Բայց կառավարութիւնը չէր կրցած լայն հայեացքով ըմբռնել թէ՛ իրենց հայաջինը ընթացքը, ստիպել տուին պարզ գիշտցիկին ձգել հարիւրաւոր տարիներու իր ձեռքի մէկ հատիկ սիրական գութան և արօրը, և զէնքի գիմել իրենց բռնաբարուած իրաւունքները պաշտպանելու և իր բարձր գիրքի վրայ հաստատուն պահելու համար այլ կողմնակի գաղտնութիւններ ընելով, ատոր պատասխանատուն միմիայն վարդինս գիւղը կը գտնէր, կարծելով թէ վարդինս մը հիմնալուսակ ընելով կարող վերահաստատուած պիտի մնար, հետեւաբար այդ

Այս հրէշային մարդուկը որ (ձորճ Զանքալեան) տասը օրէն աւելի է կը կենար էշու գրախտին մէջ, և վերջերս 5000 տուարի երաշխաւոր մը տալով գուրս եկաւ բանտէն մինչև որ դասը տեսնուի, տեսնեք արդեօք դատաւորը ճշմարտաբար պիտի վճռէ խեղճ օրիորդի դատը, որովհետեւ Ամերիկայի Միացեալ-Նահանգաց մէջ գրամատէր չեղողը, գատ ալ չի կըրնար ունենալ, արդ՛ տեղը չէ՞ որ խօսք մը ալ ըսեմ Պ. Ռուբէնին, Պ. Ռուբէնը որ փութացած էրք Արատարբը ձորճ Զանքալեանը «Ձայն Գնչուներու», 33 համարին մէջ հերոսացնել, այժմ ալ հաճեցք գրել իր արատը : Արդեօք Դաշնակցականներ այս բաները չը սիրելուն համար է որ ձեզի պէս ապուշներէ կը պախարակուին . . . Առ այժմ այսչափ, դատաւարութիւնը կը գրեմք յաջորդի : Հիմա ընթերցողք տեսօք մարդասպանութեան տեսակները . . .

Հ. Գ.

Յ. Գ.—ձորճ Զանքալեան 30 տարեկան է և ամուսնացած գերմանացի աղջկան մը հետ :

Նոյն

Ա. Զ. Գ.

Ընթերցարանի դասախօսութիւններն սկսած են, ուսանիլ փափաքողները կարող են միշտ երթալ հսկող պաշտօնեային քով արձանագրուիլ :

Պուլկարեքէն և Ֆրանսերէն լեզուներով կը թարգմանուին և կը դուրսին փոքրիկ փոխարժէքով ամէն տեսակ նամակներ և գրութիւններ վառնայի ընթերցարանի մէջ :

Մ. Զ. ի հրատարակած Հովաստի և Թովմուշ անուն գրքքոյկներու հասոյթը նուիրած է հեղինակը տեղւոյս ընթերցարանին :

Կը ծախուին վառնայի ընթերցարանին մէջ :

Ընթերցարանը Չորեքշաբթի օրերը յատկացուած է կիներու :

(—) (—)

Հնչակեան կուսակցութեան վերականգնութեան, և պատրաստ ենք ապագային ձեռք ձեռքի տալով համարալուծեալ կուսիչ մեր ընդհանուր թշնամիին դէմ — տաճկական բռնակալութեան դէմ — և ան աչք պատճառով այժմէն կը զգուշացնենք կուսակցութեան կեդրոնը, որպէս զի մի անգամ լրջօրէն ուսումնասիրէ կուսակցութեան արխիւները և կատարածի ու արատաւոր անցեալ ունեցողները խափոհեալ կուսակցութեան : Այս կը պահանջէ կուսակցութեան պատուը :

Երկու փոսքով մեր վարմանքին պատճառն են յայտնենք :

Չուա կուսակցական շահերուն ծանայող յեղափոխական օրգանի մը մէջ յեղափոխութեան բնաւ վերաբերութիւն չունեցող չօրուածիք երեւուած անձնուշտ շատերուն զարմանք կը պատճառէր : Օրինակի համար Սըլվիթ Թարիլի տուալնորդի մասին գրածը, այդ քրոնեալքը ընթերցողներու վրայ այնպիսի անպատշաճութիւն մը կը գործէ, որ շատեր անպատշաճ կակայն յեղափոխական անձնաւորութիւն մը լինելը կարող են իմանալ . . . Մինչդեռ փաստերն և իրողութիւնները հակառակն ցոյց կուտան : Այդ միեւնոյն անպատշաճութիւնն է, որ այսօր տաճկացի ցոյցները կառավարութեան կը բողոքէ իբր յեղափոխութիւնը քաջալերող, այդ միեւնոյն անպատշաճութիւնն է որ լարուած է ուսաց հիւպատոսը, իբր ուսացաւանութեան տարածման միակ արգելք և խոչնդոտ հանդիսացող անձնաւորութիւն . . .

Եւ ան Սըլի իր անձնական հակառակութեան զրգեալ խիղճ չընէր (որ արդէնչունի) այսպիսի անձնաւորութիւն մը արատաւոր և գրպարանել, գուցէ ուզած է կուսակցութեան բարեք մը ըրած ըլլալ, ուրիշ կուսակցութեան մը համակրող առաջնորդը հակայեղափոխական ցոյց տալով : Սակայն չեմ կարծեր որ կուսակցութիւնը կարիք կուենայ Սըլիին նման կեղծ շողորթութեան . . .

ԹԱՓԱՌԻԿ

(Մնացածը յայտնի)

պէս որ կարող անձին մասնութեան միջոցին, բանտարկուելով կէրկցեանն ընդամենը հետ, դատաւարութեան և երեք տարի շղթայակապութեան պատճոյ, և այդպէս ազատուելով, Մուշ անցաւ, այդ անցեալ դէպքն ու քրեան հետքն ուստիկանութեան կատարածի տուին կրկին Սղա Պէկին ձեռքակալու, ատկէ ալ կրկին արեան հետքն անուելով մինչև Միացեալ Ընկերութեան վարժարանի դուռը տարին, այդ ժամանակ ուստիկանութիւնը Կէրքը վերաւոր տեսնելով կը բռնէ և կը բանտարկէ, ատոնց ետեւէն ալ Եօրդանի Մարտիրոսը երկար բարակ հարցաքննելէ յետոյ Կէրքը վեց տարի, իսկ Սղա Պէկը և Մարտիրոսը երեքական տարի շղթայակապութեան պատիժ տուին, Կէրքը վարժարանը բանտային տաճանի կեանքին չի կրցաւ տոկալ, որով մէկ երկու տարիներ քաշելով, և հիւսիստէ մը բռնուելով մեռաւ, իսկ միւս երկուքը իրենց պատիժը լրացնելով 1889 թուականին ազատուեցան :

Վարդինի իրարու ետեւէ քրտաց ընդգրկմադրեն, Միացեալ Ընկերութեան քարոզին կատակածանքի երէթարկուելին, անկեղծ հայրենասէր դատաւորներու քարոզութիւն, գաղան Մուսայի մը հետաջողին, կաթոլիկաց տալնորդի զարնութիւն, նու մանաւանդ ամենէն ցաւալին, Մշ յառաջնորդական ավտոյ վրայ, ամենացած դաւաճան կողակողոյսի մը բազմիւն, Մշոյ աշխարհը արեան, անեւանգման և կողոպտի թատե բարեմ մը գարձուցին, այլ և և կարգ կանոն իրենց գոյութիւնը կորսնցուցին, երբեմն հայոց նկատմամբ տու երես կառավարութեան ձեռամբ գործադրուելիք օրէնքները հիմնովին ջնջուեցան, այդ խստութեան և խառնաշփոթութեան հանդէպ բողոքող ձայնը խեղդուեցան, անոր համար որ, չունէր իրեն ըստ ներկայ պահանջման առաջնորդ մը, որ իր հօտին հետ համաձայնած, արուած բողոքներուն պաշտօնական կերպարանք տալով, գիմադրէր, ըստ կարելուն զիւրութիւն մը ձեռք բերե-

գիւղի քակում ու քանդումը անհրաժեշտ կը դատէր :

Որով այդ գիւղին, այդպիսի հակառակ շաւղի մէջ թէ ինչալը, քրքրտաց ընդգրկմադրեն, իրենց ամենէն աւելի ցաւաւիթը, Մուսա պէյի Մուշէն արտաքսուելին, այդ և այդ տեսակ շատ մը բաներու յեղաշրջման սկզբնապատճառի բուն հեղինակն, Մարգարէ վարժարանը կը գտնէր, և ըստ այնմ ամենէն առաջ պատրուակաւ մը Մարգարին մէջտեղան վերցուելու պատճառներ կորոնէր, և այսպիսով մաս մը վարձկան հայեր թելադրեց, Մարգարի իւրաքանչիւր մէկ քայլը լրտեսելու ու սեղեկադրելու :

ՄԱԿԱՐ ՅՈՒՂԱՆՆԻՍԵԱՆ

(Շարունակելի)

ՀԱՆՐԱԳՐՈՒԹԻՒՆ

«Իրաւունք» անուն թերթին ու անոր խմբագրին Յ. Գուրպէթեանի բռնած գայթակղւից ու ազգա- փնաս ընթացքը պարտք կը դնէ մեր ստորագրեալներուս վրայ, հրապարակու գալ նշաւակելու այդ հայ թերթին ստոր վար- մունքը, և անոր միջոցաւ անի- րաւ ու յիմար յարձակման են- թակայ երկու պատուաւոր ու պարկեշտ անձերու Տօքթ. Ալ Ա- թաբէկեանի և Տօքթ. Յ. Ս. Փա- փազեանի մեր խորին յարգանք- քին հաւաստիքը տալ հրապար- ակաւ, ապահովցնելով զիրենք թէ ոչորմեղի ու ինկած թերթի մը ու անոր խելայեղած խմբագ- րին իսկապէս ծիծաղելի այսպա- նանքները երբէք ու կէ ազդե- ցութիւն չեն ըներ հայ հասարա- կութեան վրայ, որ այլևս կարող է որոշել ազգափնասը ազգօգուտէն, անբարոյականը պարկեշտէն և մանաւանդ այն ցած հաշիւները՝ որոնց յաջողութեան համար սյդ կարգի մարդիկ անխղճօրէն կը խաղան ազգին պատիւ բերող ազ- նիւ անձերու արժանիքին հետ :

130 Ստրագրութիւն  
Վառնա, 10 Մայիս

ՄԻՍԻԹԱՐԱԿԱՆ ԵՐԵՒՈՅՑ

Մեզքս ինչ թաղցնեմ, եւ կրօ- նական հաստատութիւններէ ելած գրքեր կամ հրատարակութիւն- ներ շատ քիչ կը կարդամ. ըլլայ լուստորչական, ըլլայ կաթողիկ, ըլլայ բողոքական :

Տեսակ մը անտարբեր եմ դէպի կրօնաւորներու հրատարակու- թիւնները, որովհետեւ համոզում մը գոյացուցած եմ թէ՛ ատմաբ- դիկ, միմիայն հանդերձաւ աշ- խարհի մասին կը խօսին, որ մեզի բողոքովին անձանթ է, իսկ այս կեանքի մասին որուն մէջ մարդ ստիպւած է պայքար մղելու ապրիլ թէ իբր անհատ, թէ իբր հասարակութեան անդամ ոչինչ կը տեսնուի Այդպէս համոզուած ըլլալով հան- դերձ՝ բողոքովին չէի մեղադրեր և չեմ մեղադրեր ան կրօնաւոր- ները, որոնք անպայման կերպով հաւատացեալ կրօնաւորներ են և իրենց ամէն հեղինակութեան մէջ կրօնական ողին, արամագրու- թիւնները և պահանջները կը շեշտեն :

Այս տողերս գրելու գլխաւոր շարժառիթն է Բաղմովէպի խըմ- բագրականը, որու վերնագիրն է «Կրօնք և ազգութիւն» իսկ բնա- բանը մեր յեղափոխական բա- նաստեղծ Գամառ Քաթիպայի եր- կու տողերը, որ կը վերաբերին կրօնական վէճերուն : Ինծի կը թուի թէ առաջին անգամն է որ

կրօնաւորներէ հրատարակուած հանդէսի մէջ, խմբագրականի մը յենակէտը կը ըլլայ Գամառ Քաթի- պային այս տողերը :

«Արուեստ, ուսում, շքեղարուեստ տարածէ հայ ազգի մէջ «Բայց բոնութեամբ միշտ հեռա- զուր նորա մէջէն կրօնի վէճ» :

Այս բնաբանով խմբագրականը, որ գրած է կաթողիկ հայ վար- դապետ մը՝ Հայր Երեմեան, իմ վրաս շատ աչէկ տպաւորութիւն մը թողուց. մանաւանդ որ հաս- տատ գիտեմ թէ մինչեւ հիմակ ոչ մէկ հայ կրօնաւոր, որ դա- ւանութեան ալ որ պատկանած ըլ- լար. ասանկ բնաբանով բան մը ոչ գրած և ոչ ալ խօսած էր :

Լուստորչական ըլլալով հան- դերձ, իբր հայ մարդ, առանց այդ յողուածը մանրազնին քըն- նութեան ենթարկելու, հրճուանք- քը կը յայտնեմ որ Վենետիկի Միսիթարեան կաթողիկ վանքէն, երկու հարիւր տարի յետոյ, Ա- լիշաններու հայրենասիրական հառաչանքներու հետ միասին դուրս կը պոռթկայ՝ «Բայց բոն- նութեամբ միշտ հեռացուր նորա մէջէն կրօնի վէճ» :

Շուտով պիտի տեսնուի Միսի- թարեան հաստատութեան երկու հարիւրամեակը և շատ միսիթա- րական ու ուրախալի է որ երրորդ հարիւրամեակը պիտի շարու- նակուի այդ նշանարանով. բայց բոնութեամբ միշտ հեռացուր նորա մէջէն կրօնի վէճ :

Այսպիսի ուրախութիւն մը ես աս չորրորդ անգամն է որ կը գամ. ստալին երբ կաթողիկ Պետրոս Մարմինանը Տրապիզոնի մէջ իբր հայ յեղափոխական ճանչցայ, երկրորդ երբ Տամատեանը, եր- րորդ երբ Հայր Ալիշանի գըր- ուածները կարգացի, չորրորդ երբ այս բնաբանով խմբագրա- կանը կարգացի. առաջին երեք դէպքերու մէջ խաբուած չեմ, կը յուսամ որ չորրորդին մէջ ալ չը պիտի հիասթափուիմ :

Թ.Ա.ՏՐՈՆ, «ՍԱՆԻԹՐԱԿ»  
Ընթերցասիրացի երիտա- սարգներու կողմանէ պիտի արուի ի նպատակ ընթերցարանի. Եւ- բաթ 20 Մայիս ժամը 9 1/2ին : «Լուքրեցիա Պօրճիա» թատերա- խաղ 4 արարուած և զաւեշտ 1 արար :

Կ. Ա. Մ. Ա. Կ. Ա. Տ. Ո. Ռ. Փ  
Ամերիկայ թրոյ, Մ. Կ. Սա- նիմ. — Ստացանք 20 Ֆրանքը : — Պուքրէշ, Տ. Պիպէճճեան. — Ստացանք 10 Ֆրանք Տ. Սարգիս Աւլուկեղոսեանի միջոցաւ :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թայմիլ թղթակիցը կը հազոր- դէ թէ Վիէննայի մէջ ստույգ տե- ղեկութիւններ ստացած են որ Պարսկաստանը Անգլիոյ բոլոր- վին հակառակ դիրք բռնած է : Ռուսիա կատարելապէս կիշխէ հոն. Պարսկաստանի մեծ վէղերը որ անգլիասէր մըն էր՝ հիմա կա- տաղի թշնամի մը դարձած է :

— Պօլտոյ Ռուս դեսպանը մայիս 9ին խիստ նոթած մը տուած է Բ. Գրան այն նեղութիւններու համար որոնց կը ենթարկուին հայերը երթեւեկութեան պատ- ճառաւ : Այդ նոթածի մէջ շեշ- տուած է նաեւ հայերու անտա- նելի վիճակը Տաճկաստանի մէջ, որու պատճառաւ կը զոպթեն կամ թէ մահմետականութիւն կը զոտնին. մատնանիշ բրած է նաեւ այն որ կատոնուոր անցա- գիր ունեցող արհեստաւոր և վա- ճառական հայերու կարգիւ թուրքի մտնալ. Ռուս դեսպա- նութիւնը կը պահանջէ կարգա-ւորել այդ խառն կ վիճակը :

— Միացեալ Նահանգներու դեսպանը չափազանց խիստ բո- յոքազիր մը տուած է Բ. Գրան հայկական ջարդերու միջոցին եղած փնասները վճարելու համար. այնքան խիստ, որ ատորմէ վեր- ջը միայն վերջնագիրը կը մնայ : — Մայիս 14ին կը հեռագրեն Պօլտէն. որ «Երկուստորդ» թուր- քերու կօմիթէն անգլիական ղեկա- պանին շնորհաւորական ուղերձ մը տուած է թագուհւոյն ծննդեան տարեգարծի առթիւ :

— Մայիս 13ին արտակարգ նա- խարարական խորհուրդ եղած է իրատէ հանելու որով պիտի բա-ւականութիւն արտի հայոց պատ- րիարքին պահանջներուն :

— Պօլտէն մայիս 12ին կը հե- առագրեն թէ՛ Օրմանեան Երլտըզ կանչուեր է, ու Սուլթանի առա- ջին քարտուղարը հաղորդած է իրեն թէ Սուլթանը հրամայած է որ բոլոր վիճելի խնդիրները Պատրիարքին ուղածին համեմատ պիտի վճռուին : Սուլթանը Պատ- րիարքին առաջարկած է հրա- ժարականը ետ առնել :

Ինչպէս կերելի այս Պատրիար- քի ուղածին պէս վճռուիլը՝ մեր աշխատակից Բաթին նկարագրածն է, որ բողոքովին չի նմանիր հե- առագրի հաղորդածին :

— Անգլիական թերթ մը կը հաղորդէ որ Թրանսիլալի կառա- վարութիւնը շրջաբերական մը հանած է որով քաղաքացիները կը հրուիրէ յայտնելու իրենց կարծիքը պատերազմը շարունա- կել կուզեն թէ խաղաղութիւն : — Մայիս 8ին թրամվիլի գործաւորներու գործադուլին պատճառով Պէրլինի մէջ խոռ- վութիւններ տեղի ունեցիւր են : Ամբոխը յարձակուեր է ոստիկան- ներու վրայ, որոնք իրենց սու-

րերը մերկացուցեր են : Լուսգիր- ներու տուած տեղեկութիւններու համաձայն երկու կողմէն ալ կան ծանր և թեթեւ վիրաւորում- ներ : 103 հոգի ձերբակալուեր են :

— Միացեալ Նահանգներու նա- խագահ Մաք-Քինլի պօէր պատ- զամուրներուն յայտարարած է որ ինք մէկ անգամ դիմած է անգլիական կառավարութեան միջամտելու համար և միբժուած է ուստի այլեւս չի կրնար դի- մել :

Հ. Ս. ԷՓՐԻԿԵԱՆ  
Բնաշխարհիկ քառասուն 1900 Վե. նետիկ Ս. Ղազար : Լոյս տեսած է այս ընդարձակ գործին առաջին քսան- թիւերիւն պրակն, որ կը բաղկանայ 160 երկխիւն էջերէ և գարդարուած է 80ի չափ խնամատիւ պատկերնե- րով : Կը պարունակէ մեր երկրի նա- հանգաց, գաւառներու, քաղաքնե- րու, վանքերու, գիւղերու, դեան- քերու, յիտներու և այլ նշանաւոր սեղեպի վրայ, աշխարհագրական, պատմական, հնախօսական և այլ կարեւոր օգտակար սեղեկութիւն- ներ : Առաջին պրակի գինն է ճանա- պարհի ծախքով 3 Ֆրանք կանխիկ : Հասցէ՝  
direction de l'Imprimerie arménienne  
St Lazare Venise

Ա. Ջ. Գ.  
Շարժուելի խմբագրութեան մէջ կարելի է բաժանորդ գրուել Փարիզ հրատարակուող «Հայկական ժողո- վրդական երգերի հաւաքածոյին» : Պուկարիոյ համար պայմանները : Տարեկան 6 գիրք 32 Ֆրանք կարելի է մաս մաս վճարել : Ա. գիրքը տասնալուսն 12 Ֆրանք Բ. գիրքը ոտանալուսն 10 Ֆրանք Գ. գիրքը ստանալուսն 10 Ֆրանք Ամէն մէկ գիրքը առանձին 6 Ֆրանք

ԸՆԴՍՐԱՅՈՒՄ ԵՐԳՐԱՐԱՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՆՍԿԱՆՈՅ  
Հին և նոր Ազգ. Երգերու գին 2 Ֆր. սոյն երգարանը կը ծախուի Վառնա, Ա. Ջարգանէլեանի գրատունը նաեւ կը գտնուի ամէն տեսակ գարդակաւ և վիպական գրքեր. գրամի փոխա- րէն կընդունի նաեւ նամակագրով. Գնում և վաճառում ամէն տեսակ գործածուած նամակագրոյնի երու : Նաեւ Շարժուելը կը ծախուի Ա. Ջարգանէլեանի գրատունը և խոմ- բագրութեան մէջ : Նոյնպէս Շարժուելը կը ծախուի Մուսալլա Ա. Գարուստի խանութի :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. «ՆԱՐԺՈՒՄ»  
Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամա- կագրութիւն, հարսանեկան հրաւի- րողիւր, մահազգ : Գիները յոյժ դիւրամատչելի : Աւրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգու- թեամբ և փութով կը կատար- ուին : ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ընկի  
Ученая и «Врачмостъ» Вара